



Գ. ԲԱՅՅՈՒԿՈՎ

ԲԵՎԵՌԻ ՎՐԱՅՈՎ
ԱՄԵՐԻԿԱ



ՀԱՅՈՒՆՆԵՐ

23 JUN 2009

087.1
F-26

Գ. ԲԱՅԴՈՒԿՈՎ
Խորհրդային Միության հերոս

ԲԵՎԵՌԻ ՎՐԱՅՈՎ
ԱՄԵՐԻԿԱ

Նկարներ
Ա. ԴԵՅՆԵԿԻ

ՀԱՅՊԵՏՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1940

28.02.2013

Քարգմանիչ՝
Յ. Ղուկասյան
Պատվազիր՝
Հ. Մարգարյան
Տեխ-խմբազիր՝
Ա. Գապարյան
Սրբազրիչ՝
Մ. Քումայան

Քլավիրի լիազոր՝ Ջ—1167. Հրատ. 5241

Պատվեր 365. Տիրած 4000.

Քուլթ 72×94 տպ. 2¼ մամ.

Մեկ մամուլում 23,872 նշան

Հանձնված և տրտադրության 25/IV—1940 թ.

Ստորագրված և տպադրության 5/VI—1940 թ.

Հայտեհրատի տպարան. Յերևան, Լենինի 65

Г. БАЙДУКОВ
Герой Советского Союза
ЧЕРЕЗ ПОЛЮС
В АМЕРИКУ
Арм. Гиз. Ереван, 1940 г.



2364-87



ԻՄ ՄԱՍԻՆ

Մանուկ հասակումս յես չեյի յերագում ավիացիայի մասին: Այդ ժամանակ դեռ առաջին թռիչքներն էյին կատարվում, իսկ սիբիրական յերկաթուղու կիսակայարանում, վարտեղ ապրում եր մեր ընտանիքը, այդ թռիչքների մասին վոչ վոք չեր լսել:

Հայրս նախապահի վերանորոգման բանվոր եր: Մայրս ուտարների բնակարաններում հատակ եր լվանում: Իսկ մենք յեղբորս հետ վագվզում էյինք անտառներով և դաշտերով ու մեր բուրյանկա կովն էյինք խնամում:

Այդպես ապրեցի մինչև ութ տարեկան հասակս: Սովորելու ժամանակն յեկավ, բայց այնտեղ, վարտեղ մեք էյինք ապրում, դպրոց չկար: Յեվ ահա, յես յերկար ժամանակով կտրվեցի մորիցս, վորին այնքան շատ էյի սիրում: Հայրս տեղավորեց ինձ Զանի կայարանի դպրոցում: Սովորելն ինձ համար շատ հեշտ եր, յեվ շատ ազատ ժամանակ եր մնում:

Կայարանի համդարտ կյանքն ինձ ճանճարացրեց, յես վնոեցի տեսնել անծանոթ քաղաքներ: Յերեք տարի յես թափառում էյի: Շատ անգամ եմ ընդունվել դպրոց, վարպեսգի մի կերպ վերջացնեմ տարրա աջ կրթությունը, սակայն ամեն անգամ ինձ չարություն համար վաճառում էյին:

Ինչ փոքր հասակիցս փորձել եմ ֆիզիկական ծանր աշխատանք: Աշխատել եմ յե՛վ վորպես սեվագործ բանվոր, յե՛վ վորպես տանիք ծածկող: Յերեք տեղի ունեցավ պրոֆտարական Մեծ հեղափոխությունը, ծանր աշխատություններից անչափահասներին հանում էյին, յեվ ինձ էլ ուղարկեցին արհեստագիտական դպրոց: Այդ ժամանակ յես արդեն տասնեկնգ տարեկան էյի: Յես ջանասիրությամբ սկսեցի սովորել, յեվ չորս տարուց հետո գիտեյի՝ փականագործություն, խառատագործություն, հյուսնություն յեվ դարբնություն, գիտեյի մաթեմատիկա յեվ ֆիզիկա:

Յերեք տարի էր համար պահանջվեցին գրագետ յեվ ուժեղ յերիտասարդ ողաչուներ, յես կամավոր գրվեցի Կարմիր Բանակի շարքերը յեվ սկսեցի սովորել ողաչական դպրոցում: Այն ժա-

մանակ դեռ յես համառ էյի, անկարգապահ, յեվ հրամանատարները շատ ջանք գործ դրին, վորպեսզի ինձ դարձնեն լավ ողաչու, իմ հայրենիքի համար գիտակից քաղաքացի յեվ մարտիկ: Այս բանի համար յես նրանցից շատ շնորհակալ եմ:

Այժմ, յերբ յես յեղել եմ աշխարհի կեսում, տեսել եմ շատ յերկրներ, ծովեր յեվ ավիանոսներ, հիշելով ի՛մ դաժան մանկությունը. մտածում եմ՝ ի՞նչ պիտի անեյի յես, յեթե չլինեք խորհրդային իշխանությունը: Հավանաբար կմնայի տանիքներ ծածկող:

Ութ տարուց ավելի յես աշխատել եմ վորպես ողաչու ողաչին ուժերի զանազան ջոկատներում յեվ վորից հետո միայն սկսել եմ յերագել ողային մեծ համբորդությունների մասին: Յես ուզում էյի բռնել այնտեղ, վարտեղ դեռ վոչ վոք չեր թռել:

Յեվ ահա 1936 թ. մեր յեղյակ ողաչուներ՝ Զկալովը, Բելյակովը յեվ յես՝ թռանք Ստալինյան մարշրուտով, մեր խորհրդային Արկտիկայի դաժան մասերի յեվ Յակուտիայի լեռների վրայով:

Իսկ 1937 թվին ընկեր Ստալինը մեզ բուլլատրեց բռնելու Հյուսիսային բեվեռի վրայով Ամերիկա:

Մեր թռիչքի համար պատրաստված եր մեծ ողանավ՝ խորհրդային լավ մոտոռով: Մենք լավ սովորեցինք բռնել նրանով, ուսումնասիրեցինք բոլոր սարքավորումները:

Բեվեռի յեղանակի մասին մեզ հաղորդել եր Պապանինը, վորն իր քաջարի ընկերների հետ ապրում եր այն ժամանակ դրեյֆոդ (անընդհատ շարժման մեջ գտնվող) սառույցների վրա:

Այս գրքում յես պատմելու եմ ձեզ, յերեխաներ, թե ինպես մենք թռանք Հյուսիսային բեվեռի վրայով Ամերիկա:

T. Savitsky

ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՄԻԱՅՅԱԼ
ՆԱՀԱՆԳՆԵՐ



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

Թ Ռ Ի Զ Ք

Հիմա մենք պիտի թռչենք հեռու և վտանգա-
վոր ուղի: Բոլորս տաք հագնվեցինք, թեյ խմե-
ցինք և գնացինք ողանավակայան:

Մկսեց լուսանալ: Քամի չկա: Զով ե: Անտա-
ռից շարժվում ե առավոտվա մառախուղի ցածր
քողը:

Հունիսի 18-ի գիշերվա առաջին ժամն ե: Ժա-
մանակն ե ողանավ նստել:

Թռիչքի ճանապարհի վրա կանգնած ե մեր
մետաղյա թռչունը:

Հավաքվել են բազմաթիվ ճանապարհ գցող-
ներ: Մեծ մասը հուզվում ե, մի քանիսի աչքերում
յերևում են արցունքներ:

Մենք մտնում ենք խցիկի մեջ և վերջնա-
կանապես դասավորում ենք հրացանները, փամ-
փուշտները, զահուկները, ժամացույցները, քամա-
չափերը, պահածոների տուփերը և շատ այլ իրեր:

Վերջապես ամեն ինչ պատրաստ ե: Արդեն
խցիկից սեղմում ենք տասնյակ բարեկամական
ձեռքեր: Շատերը, սանդուխներ զնելով, բարձրա-
նում են դեպի մեզ, ամուր գրկախառնվում և
համբուրում են հրաժեշտի առթիվ: Վերջապես
Վալերիյ Զկալովը նստեց իր տեղը՝ դեկը վարելու:
Յես նստեցի նրա յետևը: Մաշա Բելյակովը փակեց
մուտքի դռնակը: Ողանավի կողքի պատահանից
յերևում եր, թե ինչպես մարդիկ քաշվում են մի

կողմ: Մեկնանշորդը թափահարեց սպիտակ փոք-
րիկ դրոշակը: Վեր բարձրացավ աղբանշանի հըր-
թիորը և ողանավը շարժվեց: Մոտոռն ամբողջ ու-
ժով մոնչում է: Ողանավը ավելի ու ավելի արագ
է վազում ճանապարհով դեպի առաջ: Հետո մի
ցատկում—և մենք կախվեցինք ողի մեջ:

Շչեկովի գործարանների ծխացող ծխնելույզ-
ներն անհետանում են: Ողանավակայանը մնաց
յետևում: Մնաս բարով, Մոսկվա: Ահա, և մենք
թռանք բեռնի վրայով Ամերիկա:

ՈՂԱՆԱՎԻ ԽՑԻԿՈՒՄ

Մեզանից յուրաքանչյուրն ունի շատ գործ և
պարտականություններ:

Զկալովը պետք է դեկավարի ողանավն ութ ժամ:

Յես պետք է չորս ժամ ցույց տամ ողանավի
ուղղությունը, հետևեմ, վոր ուղիղ դեպի բեռ
թռչենք, և ռադիոյով վարեմ բանակցություններ:

Նախ Բելյակովը պետք է հանգստանա: Ժամա-
նակ կանցնի, Զկալովը կհոգնի, և այդ դեպքում
յես նրան կփոխարինեմ: Բելյակովը ռադիոյով
կգրադվի խոսակցությամբ և ցույց կտա ողանավի
ուղղությունը: Այսպես, փոխարինելով իրար, մենք
կթռչենք:

Մեր ողային ճանապարհի հովիտների մեջ
թանձր մառախուղ է: Զկալովը կեպին դրած ու
կաշվե զգեստը հագին, թվում է, թե ողաչու չե,
այլ շոֆեր է, վորը պատրաստվել է մեզ ման ածել
քաղաքից դուրս: Նա հանգիստ է և շարունակ
ներքև է նայում:

Սաշա Բելյակովը քնած է յուղի ամանի վրա,—
տակին փռած է քնելու մորթե տոպրակը: Նրա
յերկար վոտները չեն տեղավորվում յուղամանի

վրա, նրանք դուրս են յեկել ռադիոկայանից
բավական հեռու: Մորթե անճոռնի կոշիկները
ծիծաղելի կերպով շարժվում են, կասես թե բըր-
դոտ յերկու շնիկներ լինեն:

Ռադիոյով յես հաղորդում եմ Մոսկվա, թե
ինչպես է աշխատում մեր մոտոռը և վորտեղ ենք
մենք թռչում:

Խցիկում լավում է մոտոռի անընդհատ դրդյու-
նը: Խորհրդային մոտոռն աշխատում է անխափան,
և մենք գովում ենք մեր բանվորներին ու մեխա-
նիկներին:

Աջից բարձրանում է արևը: Նա մեզ մոտ թա-
փանցում է խցիկի ապակիների միջով և սուր կերպով
ծածկում մեր աչքերը: Դնում եմ կապույտ ակնոց-
ներ:

Ժամանակն անցնում է: Ողանավն արագ թռ-
չում է հյուսիս: Հիմա մեր ներքև շատ և շատ
լճեր են: Նրանք մեծ են, սակայն ողանավի լու-
սամուտից փոքր են թվում՝ ավսեյից վոչ մեծ:
Դիմացից յերևացին բարձր փետրանման ամպեր:

Մեզ յերկար ժամանակ ուղեկցում էյին յեր-
կու ողանավ: Հիմա նրանք հետ են դառնում: Ո-
ղաչուները խցիկներից մեզ ձեռքով բարի ճանա-
պարհ են մաղթում և հետո անհետանում մեր աչ-
քից: Մենք մի քիչ տխրում ենք: Սակայն, մեռ
կարմրաթև հսկան վստահ շարունակում է թռիչքը
դեպի հյուսիս:

Մենք աստիճանաբար ավելի և ավելի յենք
բարձրանում:

Յես հաճախ գործիքներով չափում եմ քամու
ուղղությունը, հաշվում եմ ուղու ճշտությունը,
կամ ինչպես ողաչուներն են ասում՝ հաշվում եմ
կուրսը: Այս բոլորը գրանցում եմ կարմիր ուրա-
գրի մեջ: Իսկ յերբ մոտենում է ռադիոն լսելու



Ժամանակը, յես հազնում եմ ականջակալը և դառ-
նում եմ Մոսկվային: Մոսկվայից մեզ հայտնում
են, թե ինչպիսի յեղանակ ե սպասում մեզ: Հա-
ճախ հարցնում են, թե ինչպես են գնում մեր
գործերը: Ռադիոյի համար մեզ մոտ կա ուրիշ
որագիր՝ կապույտ: Այստեղ մենք գրում ենք Մոսկ-
վայի հետ մեր ունեցած բոլոր խոսակցություն-
ները: Բոլորը, ինչ վոր յես տեսնում եմ, գրում
եմ որագրիս մեջ: Յերբ վերջանա թոիչքը, յես
կունենամ պատրաստի գիրք: Այն կկարդան նաև
յերեխաները: Չե վոր նրանց համար հետաքրքրա-
կան ե իմանալ մեր թոիչքի մասին:

Կեստրն անցավ աննկատելի: Բելյակովը զարթ-
նեց, և յես նրան եմ հանձնում իմ հերթապահու-
թյունը: Նա խնամքով ինձանից ընդունում ե բո-
լոր գործիքներն ու գրքերը:

Յես անցնում եմ քնելու տեղը, վորտեղ քիչ առաջ հանգստանում եր Բելյակովը: Ուղղելով մուշտակե փովածքը, յես պառկում եմ քնելու Վալերիայի յետևը:

ԱՌԱՋԻՆ ՏԱԳՆԱՊԸ

Բայց քնել ինձ չհաջողվեց: Շուտով Բելյակովը տագնապ բարձրացրեց: Նա արթնացրեց ինձ, հարմար անկողնուց վորտիցս քաշելով:

— Յուզը ինչ վոր մի տեղից դուրս ե գցում, — ասաց Սաշան, ցույց տալով հատակը:

Իսկապես, խցիկի հատակը ծածկվել եր ողանալային յուզով: Յես արագ մոտեցա Չկալովին և սկսեցի ականջին գոռալ ղեպքի մասին: Չկալովը ինձ նայեց անհանգիստ հայացքով և հուզված ձայնով գոչեց.

— Գտիր շուտով փնասված տեղը:

Բոլորս հուզված ելինք: Վտանգավոր ռոպեններ են: Յեթե ամբողջ յուզը գնա, մոտոռն անպայման կանգ կառնի: Յեթե մոտոռը չաշխատի՝ ողանավը կրնկնի գետնի վրա, և մենք չենք թռչի Ամերիկա: Մենք չենք թռչի մինչև բեռ... Մենք չենք կատարի սիրելի Ստալինի առաջադրանքը...

Իսկ Ստալինին մենք յերգվել ենք, և նա մեզ վրա վստահ ե:

Հաղթահարելով մեր հուզմունքը, մենք հանգիստ սկսեցինք փնտռել յուզի դուրս գալու պատճառները: Պոմպով յուզը մոտոռային ամանից լցրինք մյուս՝ պահեստի ամանի մեջ, խցիկում յերևան յեկած յուզը մի քանի անգամ սրբեցինք: Մենք ջնջոցներ չունեինք: Ստիպված կտրատեցինք ռեզինե տոպրակները, վորոնց մեջ գտնվում եյին մեր ուտելիքները: Մի քանի ժամվա աշխա-

տանքից հետո, այնուամենայնիվ գտանք պատճառը և վերացրինք այն: Պարզվեց, վոր մենք չափազանց շատ եյինք լցրել յուզը, և այդ ավելցուկը մոտոռային յուզի ամանից դուրս եր հոսել:

Այսպես ազատվեցինք առաջին փորձանքից:

ՈՂԱՆԱՎԸ ԾԱԾԿՎՈՒՄ Ե ՍԱՌՈՒՅՅՈՎ

Յես խոր քնի մեջ եյի: Յերեկոյան ժամը 10-ին ինձ զարթեցրին: Ինչպես չեյի ուզում զարթնել: Բայց Չկալովը, վարպետորեն կատարելով թռիչքը, ութ ժամ նստած եր ղեկի մոտ և հոգնել եր: Պետք եր նրան փոխարինել:

Յես խոսեցի Բելյակովի հետ: Համոզվելով, վոր մենք ճանապարհն ուղիղ ենք գնում, յես բարձրացա առաջին նստատեղի վրա: Փոխարինվել ղժվար ե մեզ համար. պետք ե նեղ խցիկում ձկան պես սողալ, կողքից կուշ յեկած բարձրանալ:

Յերբ յես վտաներս դրի ղեկի մոտ, Վալերին ինչ վոր բան ասաց ինձ գոռալով, բայց մոտոռի աղմուկից յես վոչինչ չհասկացա: Վալերին հետ սողաց: Յես ուշադիր ստուգեցի տասնյակ գործիքներ և սկսեցի ղեկավարել ողանավը:

Նայեցի շուրջս: Պարզվեց, վոր մենք թռչում ենք ամպերի յերկու շերտերի միջով, վորոնք հենց այս ե, պետք ե միանան. կարծես չենք թռչում, այլ ընկնում ենք ձորի մեջ:

Ողանավը, խիստ ծանրաբեռնված, չի կարող բարձր թռչել: Իսկ մենք ուզում եյինք, վոր ողանավը միշտ կարողանար թռչել ամպերից ավելի բարձր: Յերկնքում լողացող ամպերն այնքան ել անվտանգ չեն: Հաճախ ե պատահում, վոր ողանավը մտնելով այդ ճերմակ գույրընների մեջ,



դուրս ե թռչում նրանց միջից ամբողջովին ծածկըված սառույցով: Իսկ յեթե սառույցը լինում ե հաստ, այդ դեպքում ողանափը ծանրանում ե ժամանակից շուտ իջնում կամ նույնիսկ վայր ե ընկնում ու ջարդվում: Նման ամպերից ողաչուները վախենում են: Պետք ե խուսափել նրանցից: Կարելի յե անցնել նրանց վրայով, կարելի յե նրանց կողքից կամ ներքևից անցնել: Բայց նախորոք գուշակել՝ կսառցակալվես ամպերի մեջ թե չե, շատ դժվար ե:

Ճիշտ ե, կան ամպեր, վորոնց միջով կարելի

յե թռչել թեկուզ ամբողջ ուրը, ե վոչինչ չի պատահի: Միայն պետք ե կարողանաս թռչել կուրորեն: Թռչունները չեն կարող թռչել, յեթե հողը չեն տեսնում: Յեթե աղափու աչքերը փակենք, նա վոչ մի տեղ չի թռչի:

Իսկ ողաչուն մառախուղի կամ ամպերի մեջ կարող ե թռչել: Նա չի տեսնում վոչ յերկիրը, վոչ յերկինքը, բայց հատուկ գործիքների ոգնությամբ գիտե, ինչ գրության մեջ ե գտնվում ողանափը:

Կույր թռիչքն իմ մասնագիտությունն ե, ե ամպերի մեջ թռչելու պարտականությունն ինձ վրա յե ընկած: Հենց վոր հարկավոր եր լինում կույր թռիչք կատարել, Զկալովն ողաչուի նստատեղն ինձ եր գիշում: Մեր մեջ առաջուց այդպես եյինք պայմանավորվել:

Այժմ, յերբ յես տեսա, վոր մեր շուրջն ամպեր են, ինձ հասկանալի դարձավ, թե ինչի մասին եր գոռում Վալերին, յերբ յես նստած եյի դեկանիփի մոտ:

Նայեցի ջերմաչափին—նա ցույց ե տալիս, վոր ցուրտ ե: Այդ վատ նշան ե. ամպերի մեջ կարելի յե սպասել սառցակալում:

Ողանափն սկսեց ուժեղ ուրորվել: Խցիկում սկսեց զգացվել խոնավություն: Յերկիրը բուրբուկին չեյ յերևում: Նա ծածկված եր ամպերի տակ: Արևն ել թագնվել եր ամպերի յետևում:

Ահա ջրի սպիտակ գուրջիները ծածկել են թևերը, ե յես շուրջս տեսնում եմ միայն սպիտակ գուրջի: Ողանափը պահում եմ միայն գործիքների վրա հիմնվելով: Ինչ խելոք ե խորամանկ են այս գործիքները: Տասնյակ սլաքներ ցույց են տալիս ողանափի ամբողջ աշխատանքը:

Այդպես անցան թռիչքի լարված բույները: Հանկարծ յես նկատեցի, վոր առաջին խցիկի ա-

պակիները ծածկված են սառցաշերտով: Կարմիր թևերը դարձան ճերմակ: Լավեցին հարվածները և ողանալը կարծես ցնցվեց տենդի մեջ: Նշանակում է, սառցակալումը ուժեղ է և շատ վտանգավոր: Պետք է շտապ սառույցը մաքրել պտուտակի վրայից, այլապես հեռու չես թուշի:

Յես գոռացի վողջ կոկորդոս:

— Վալերի:

Չկալովը, հոգնածությունից կարմրած աչքերով, անհանգստացած, արագ մոտեցավ ինձ:

— Թափիր հեղուկը պտուտակի վրա:

— Հիմա, — նույնպես բարձրաձայն պատասխանեց Վալերին:

Նա ամանի վրայից արագ իջավ և սկսեց պոմպով դուրս քաշել:

Հատուկ հեղուկի հոսանքը, կարծես ջրցանով լվանում էր մետաղյա պտուտակը, մաքրելով նրա վրայից սառույցը: Ողանալն ավելի հանգիստ ընթացավ: Հարվածները պակասեցին:

Ծանր բույները ելին: Հավանաբար, Չկալովի գլխի վրա ավելացավ ևս մի քանի սպիտակ մազ:

Յես հասկացա, յեթե մենք մի քիչ ել մնանք այդ ամպերի մեջ, ողանալը կտոր-կտոր կլինի կամ ժամանակից շուտ սառույցներով ծանրաբեռնված կնստի ջրի կամ սառցաժայռի վրա:

Շուտ ազատվել սառցակալման գոտուց: Բարձր, բարձր: Յես մոտոռին տվի լրիվ շարժման և սկսեցի վեր բարձրանալ: Ողանալը դանդաղ՝ մետր մետրի յետևից բարձրանում է:

Ձախից սկսեցին թափանցել արևի աղոտ ճառագայթները — նշանակում է՝ շուտով կվերջանա ամպամածությունը:

Մեկ բույնից հետո դուրս յեկավ արևը և մենք, նրա ճառագայթների պես փայլուն և ու-

րախ, հպարտությամբ ելինք նայում ներքև մնացած ամպերին:

Յես թեթևացած շունչ քաշեցի և ուսիս վրայից նայեցի Վալերիին: Նա քիչ չեր հուզվել, և հիմա, լրջորեն ժպտալով, սկսեց ավելի տաք փաթաթվել քնելու տոպրակի մեջ:

Արևի տակ իմ խցիկի ապակիներն արագ կերպով մաքրվեցին սառույցներից: Ամպերը, վորոնց միջով մենք անցել ելինք, մնացին ներքև, հեռվում:

Մի բույն ներքևում յերևաց ծովի կապույտ մակերևույթը: Միայնակ շողենավը ծխում էր իր խողովակներով, անցնելով մեր տակից:

Յես մտածում եմ, արդյոք շողենավից մեզ տեսել են: Հավանաբար, վոչ: Բայց մոտոռի թընդյունն անշուշտ լսել են, և արդեն, իհարկե, ուղիով այդ մասին հաղորդել են Մոսկվա: Անկասկած Ստալինին ել հայտնել են, վոր մենք լավ ենք թռչում: Նա ամենից շատ է հուզվում, յես դրանում հավատացած եմ: Չե՞ վոր նա սիրում է վողջ ժողովրդին, սիրում է ողաչուններին և հետևում է ամենքին, խրախուսում է ամենքին:

Այս մտքերը հաճույք են պատճառում և ջերմացնում են ինձ:

ՔԻՉ ԵՐ ՄՆՈՒՄ ՄՈԼՈՐՎԵՅԻՆՔ

Ժամանակը թռչում է արագ: Աննկատելի կերպով հասավ հերթափոխության ժամը: Շուտ եմ գալիս և ձեռքով քաշում եմ քնած բարեկամիս: Չկալովը շփում է աչքերը: Շուտով յես նրան եմ տալիս ղեկանիվը, իսկ ինքս գնում Բելյակովի մոտ: Բելյակովը ջղայնացած նստած է իր փոքրիկ սեղանի առաջ: Կոտրվել էր նրա մի կարևոր գործիքը: Այդ գործիքն արևով վորոշում է, թե ինչ ուղղու-





թյամբ ենք գնում: Յեթե այդ գործիքը չլինի, հեշտությամբ կարելի չե մոլորվել:

Յածրում յերևում են դարձյալ նույն ամպերը: Նրանք ամբողջ ուր ծածկում են մեր աչքից գետինը և մենք չգիտենք, թե վորտեղ ենք գտնվում:

Բեկյակովը, հոգնած, գլուխը կախ, ճգնում ե ուղիոյով ընդունել հեռագրի հնչյունների կտորները: Նրա շրթունքները կապույտ են, գեմքի վրա հայտնվել են կնճիռներ—նա շատ հոգնած ե:

Յես նրան առաջարկեցի հանգստանալ, իսկ ինքս նստեցի նրա տեղը: Թարմ գլխով յես շուտով կարողացա կարգի բերել կոտրված գործիքը: Ինչպիսի ուրախություն: Հիմա մենք կթռչենք ուղիղ բևեռի վրայով Ամերիկա:

Հենց այստեղ ուղիոյով հաղորդեցի Մոսկվա վերջին տեղեկությունները:

Յես նայեցի ժամացույցին: Նա ցույց ե տալիս յերեկոյան ժամը տասնմեկը: Մոսկվայում արդեն մութ ե, և բոլորը պատրաստվում են քնելու: Յերևի և իմ փոքրիկ աղջիկ Նաման ել արդեն յերազում տեսնում ե աքլոր կամ արջուկ: Իսկ այստեղ, Սառուցյալ ովկիանոսում, ամառը գիշեր չի լինում, և արևը լուսավորում ե, առանց մայր մտնելու մայիսից մինչև սեպտեմբեր, շատ ուր ու գիշերներ: Արևը փոչ մի կերպ չի կշտանում հեռավոր սառուցյալ դաշտերի տարածություններին նայելուց: Բայց դրա փոխարեն ձմեռն արև չի յերևում ամբողջ կես տարի:

Բ Ե Վ Ե Ռ

Փչում ե ուժեղ քամին ուղիղ մեր յերեսին և մեզ կարգին ուշացնում ե: Մենք թռչում ենք ամբողջ ուր: Մոսկվայում մարդիկ արդեն դարթ-

նել և աշխատանքի յեն շտապում: Իսկ մենք դեռ
չենք հասել բեկոր: Ժամանակը դանդաղ է անց-
նում, թվում է, փոր մի ամբողջ ամիս թռչում
ենք: Այդ հոգնածությունից է: Անշուշտ, մեզ հոգ-
նեցրել է թուիչքի մեծ բարձրությունը:

Այս ամբողջ ժամանակի ընթացքում միայն մեկ
անգամ ենք նախաճաշել: Յեվ այն ել ամեն մեկս
կերել ենք մի կտոր հաց ապխտած խոզի մսով:
Իսկ Մոսկվայի մանուկներն այդ ժամանակա-
միջոցում առնվազն վեց անգամ են կերել: Սակայն
մենք ձեզ չենք նախանձում: Դուք դեռ փոքր եք՝
կերեք, դրա փոխարեն մենք ենք Ամերիկա թռչում:
Իսկ յերբ հասնենք, մենք ել կուտենք ինչպես
հարկն է:

Ահա սաստիկ խմել ենք ուզում: Մեր կոկորդը
չորանում է: Իսկ մեր ջուրը պաղ է՝ ինչպես
սառույց:

Շուտով, շուտով բեկոր կլինի:

Մենք կարգին հոգնել ենք: Հաճախ մեր տե-
ղերը փոխում ենք իրար հետ: Աշխատանքը դար-
ձավ ավելի դժվարին—սաստիկ բաբախում է մեր
սիրտը: Չե փոր գետնի վրա աշխատելը շատ ավելի
հեշտ է, քան ողում, այն ել ամպերից վերև:

Բարձրում ձեռքը շարժելը միևնույն է, թե մեկ
տուպրակ ցորեն բարձրացնես: Մեզ թեթև զգալու
համար յերբեմն թթվածին ենք շնչում: Հագնում
ենք դիմակները հակազադի նման և խողովակի
բերանով շնչում ենք մետաղյա շնչից թթվածինը:
Դա կարգին թարմացնում է մարդուն:

Իսկ մենք շատ բարձրումն ենք գտնվում,—
գետնից չորս կիլոմետր վեր:

Առաջվա պես հողը մենք չենք տեսնում, նա
ծածկված է ամպերով:

Բելյակովի ռադիոկայանում մի ինչ փոր բան



Ֆաստիվել եւ Նա փոշ մի կերպ չի կարողանում լսել Մոսկվային:

Յես նստած եմ դեկանիփի մոտ, վարում եմ ողանավը և անհամբեր սպասում, թե յերբ կհասնենք բեռն: Բելյակովը գործիքները հաճախ ուղղում ե արևին, վորպեսզի ճանապարհը չկորցնենք:

Հունիսի 19-ի ուղիղ առավոտյան ժամը 4-ին մոտեցանք բեռնին: Հսկայական բարձրությունից բեռը նմանվում ե վիթխարի սառցե անապատի:

Բոլոր գործիքները և մոտոռը լավ են աշխատում: Ներքեում, սառցակույտի վրա նստած են Պապանինը, Կրենկելը, Ֆեոդորովը և Շիրշովը: Նրանք արդեն շատ ուրեր ե, վոր ապրում են միայնակ, լուռ և դաժան սառույցների մեջ: Նրանց սառցակույտը մի տեղում կանգնած չե, այլ շարժվում ե նրանց բոլոր վրանների հետ միասին: Իսկ պապանինականները չեն վախենում: Քաջարի, ընտիր Խորհրդային զինանական-բեռնախույզներ են զբրանք: Նրանք մեզ, ողաչուններին, հաղորդում են յեղանակի մասին:

Մենք անցնում ենք նրանց ճամբարի վրայով: Սակայն շատ ափսոս, վոր ամպերը նրանց ծածկում են մեր աչքերից:

Վողջոյն ձեզ, խիզախ պապանինականներ: Ցտեսություն, ընկերներ: Մեր ճանապարհը դնում ե ավելի հեռու...

Զկալովն ուրախանում ե յերեխայի նման: Նա ծիծաղում ե, հաճախ դիտում ե դուրսը և, շլացած սառույցների փայլից, աչքերը կկոցում, դնում ե ակնոցները և նորից դիտում սառույցների լայն տարածությունները:

Մեր ուրախությանը մենք վորոշեցինք մասնակից անել նրան, ով մեզ սովորեցրել ե լինել քաջ և սառնասիրտ: Մենք կազմեցինք հեռագիր ընկեր Ստալինին:

ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ, ՍՏԱԼԻՆԻՆ

Բեվեռլ ՄԵՐ ՅԵՏԵՎՈՒՄՆ Ե, ԳՆՈՒՄ ԵՆՔ ՍԱՌՑԱԿՈՒՅՏԵՐԻ ՎՐԱՅՈՎ ԴԵՊԻ ԱՄԵՐԻԿԱ: ԼԻ ՅԵՆՔ ԶԵՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՅԱՆԿՈՒԹՅԱՄԲ: ԲՈՒՈՐՍ ՄԵՋ ԼԱՎ ԵՆՔ ԶԳՈՒՄ: ՎՈՂՋՈՒՅՆ:

ԶԿԱԼՈՎ, ԲԱՆԴՈՒԿՈՎ, ԲԵԼՏԱԿՈՎ:

Այս հեռագիրը ռադիոյով ուղարկեցինք Մոսկվա: Մենք թուշում ենք արդեն մեկ ցերեկ, մեկ գիշեր ու ելի մեկ ցերեկ:

ԱՆՄԱՏՁԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԵՎԵՐԻ ՎՐԱ

Բեռնի և Ամերիկայի միջև գտնվող վայրն անվանում են «անմատչելիության բեռն»: Այստեղ դեռ ողանավեր չեն թռել:

Առաջին անգամ մենք, Խորհրդային ողաչուններս ենք թուշում: Պարծանքով սլանում ենք անհայտ Արկտիկայի դաժան սառույցների վրայով: Մեր տրամադրությունը զվարթ ե և ուրախ: Յեղանակը լավացել ե: Արեվը պայծառ-պայծառ լուսավորում ե: Առանց ակնոցների չի կարելի նայել սառույցներին: Կարելի ե անմիջապես կուրանալ:

Վոր կողմ նայում ես, տեսնվում են հարյուրավոր կիլոմետր սառույցներ, սառույցներ և սառույցներ... Ամեն ինչ սպիտակին ե տալիս և փայլում ե: Սեվին են տալիս միայն խոր ճեղքվածքները:

Զորս կողմ փոշ մի կյանք չկա: Գեղեցիկ և սարսափելի տեսարան ե:

Իսկ ի՞նչ կլինի, յեթե մեր մոտոռը կոտրվի և մենք իջնենք ճեղքվածի վրա: Այդ դեպքում անպայման կկորչենք...

Բայց մոտոռի համաչափ և ուժեղ թնդունը ցրում ե մեր սարսափելի մտքերը, և մենք հան-



գիստ թռչում ենք չհետադուրված տարածությունների վրայով:

Այսպես անցավ մի քանի ժամ: Բայց ահա առջևում մենք նկատեցինք ամպեր: Նրանք սկսվում եյին գետնից և բարձրանում յերկնքի մեջ: Ինչպես եյին ձանձրացրել մեզ ամպերը: Իսկ այստեղ մեր ունեցած հեղուկը հակասառցակալման դեմ արդեն վերջացել էր:



Վճռեցինք բարձրանալ ամպերից վեր և անց-
նել նրանց վրայով:

Կեսորին ողանալը գետնից վեց և կես կիլո-
մետր բարձրության վրա յեր գտնվում: Անշուշտ,
ներքևից փոշ մի կերպ մեզ տեսնել չեր կարելի:
Բայց ամպերը մեզանից ավելի բարձր են: Շնչելու
համար ողը չի բավականանում:

ՈՂԱՆԱՎՆ ԱՄՊԵՐԻ ՄԵՋ

Վերջապես պարզ յեղավ, փոր ամպերից բար-
ձրը թռչել մենք չենք կարող: Նրանք նորից կլա-
նեցին մեզ: Այս անգամ ողանալը նետվում եր
դես ու դեն, ինչպես խալալիք: Յես հագիվ եմ
կարողանում նրան ուղիղ պահել: Այսպես թռչում
ենք ամբողջ մի ժամ: Գործը վատ ե՝ նորից կիտ-
վում են սառույցները թևերի վրա: Պետք ե գնալ
ցած: Մոտոռի ուժը թուլացնում եմ, և մենք սա-
հուն կերպով իջնում ենք դեպի գետին:

Ներքևում լույսի նշույլ յերևաց: Ամպերը
բամբակի նման պատռվեցին: Մենք ինչ փոր մի
կղզի տեսանք: Բայց չանցավ մեկ րոպե, նա կրկին
անհետացավ: Այդ ժամանակ ողանալի առջևի մա-
սից ինչ փոր մի բան հանկարծ ցայտեց: Ողանալի
առջևի լուսամուտը միանգամից ծածկվեց սա-
ռույցի հաստ շերտով: Նշանակում ե, մոտոռը ջուր
դուրս գցեց և նա մի ակնթարթում սառնամանիքի
մեջ սառեց:

Մարմնովս սարսուռ անցավ: Յես գոռացի ամ-
բողջ ուժով, փոր ինձ դաշույն տան: Չկալովը տվեց
յերկար և սուր դաշույնը: Կողքիս լուսամուտից
յես ձեռքս դուրս հանեցի և նրանով կտրեցի սա-
ռույցի կտորները: Ստացվեց լուսավոր պատուհան,
փորի միջով յես նորից տեսա մոտոռը: Յեվ, ինչ

սարսափ, մոտոռի վրայի գործիքը ցույց ե տալիս,
փոր մոտոռի մեջ այլևս ջուր չկա: Իսկ առանց ջրի
մեր մոտոռը մեկ ժամ ել չի կարող աշխատել,
կշարդվի: Ահա — ահա, և մենք կսլանանք ռերքե,
ինչպես նետահար թռչուն:

— Ջուր, ջուր տվեք, այլապես մոտոռը կշար-
դվի, — գոռացի յես Չկալովին:

Չկալովը նետվեց պահեստի ջրի ամանի մոտ
և Բելյակովի հետ միասին սկսեց դիտել այն:

Այնտեղ, ամանի մեջ, կային սառցի կտորներ,
բայց փոշ յերբեք ջուր: Վերտեղից ջուր վերցնենք:
Ահա, ռեզինե տոպրակի մեջ խմելու ջուրը: Բայց
նա յել սառույց ե դարձել: Մյուս տոպրակներում
ել նույնն ե: Բելյակովը կտրում ե ռեզինը, ճեղ-
քում ե սառցե կեղևը և ուրախությամբ տեսնում
ե, փոր մեջը դեռ մի քիչ հեղուկ կա:

Վալերին և Սաշան լցրին ջրի ամբողջ մնացորդը
պահեստի ամանի մեջ, և հուզմունքով գոչեցին ինձ.

— Ջուր կա:

Յես սկսեցի պոմպով քաշել: Շուտով ջուրը հա-
սավ մոտոռին: Գործիքը ցույց տվեց, փոր հիմա
ամեն ինչ կարգին ե և մոտոռը կաշխատի:

Չգուշությամբ մոտոռին լրիվ ուժ տվեցի: Նա
նորից, ինչպես և առաջ, սկսեց աշխատել հավա-
սար և կանոնավոր:

Յերեք ժամվա տանջանքներից հետո ամպը
պատռվեց, և մենք դուրս թռանք մաքուր կա-
պույտ յերկինքը:

Ներքևում դանդաղ լողում ե մի մեծ կղզի:
Յերևում են նաև անթիվ սև, ավելի փոքր կղզիներ:
Իսկ նրանց շուրջը պատած ե սառույցներով:

Արևի և քարտեզի ոգնությամբ Բելյակովը փո-
րոշեց, փոր մենք թռչում ենք Բենկս կղզու վրա:
Կղզին շատ մեծ ե՝ պատռված ձորերով և գե-

տակներով: Չորերում ձյուն է, գետակներում— սառույց: Կղզիների ափերը բարձր և զառիվեր են: Մենք իջանք ավելի ցած: Ինչքան լավ է գտնվել այդպիսի փոքր բարձրություն վրա: Խցիկի պատուհանից դուրս սառնամանիք համարյա չկա: Ողանավի ներսում տաք է: Շնչառությունը նորմալ է: Տրամադրությունն ուրախ: Նույնիսկ ուտելու ախորժակ զգացվեց:

Յես Բելյակովից խնդրեցի ճանապարհի պաշարի տուրքակը: Ահա հավը, ահա միսը, ահա ապուխտը, ահա նարինջները, խնձորները և շոկոլադը: Յես ընտրում եմ վարդագույն խնձորներ: Նրանք ամբողջովին սառած են: Տալիս եմ Վալերիին ու Սաշային և սկսում եմ ինքս խոփել համեղ, սառած խնձորները: Ատամներս ցավեցնում է խնձորը և մարմնիս մեջ զգում եմ հաճելի զովություն: Հետո վերցրի նարինջներ: Նրանք բոլորովին սառել էին և միայն խցիկի շերմացնոց խողովակի վրա յեն հալվում: Չկալովը հրաժարվեց այդ ուտելիքից: Նա առհասարակ ամբողջ ճանապարհին փոչինչ չեր ուտում: Բելյակովը մի նարինջ կերավ, իսկ յես վերջացրի մնացածները: Ո՛ր, ինչպես կազդուրեցին իսպանական նարինջները: Յերկու ցերեկվա և յերկու գիշերվա ընթացքում այդ միայն մեր յերկրորդ նախաճաշն էր ճանապարհին:

Հ Ա Ս Ա Ն Ք

Մոսկվայում հունիսի 19-ին յերեկոյան ժամը յոթն եր, յերբ մենք վերջապես մոտեցանք Ամերիկայի ափերին: Ուռն, ուռն: Մեծ Ստալինի առաջադրանքը կատարված է:

Դա ավելացնում է մեր աշխուժությունը և ույժը: Ցանկանում ես անելել ավելին, փորպեսզի մեր ժողովուրդը և Ստալինը ասեն՝ «Ապրեն աղերքը»:

Առաջին անգամ մենք թռանք անձանոթ տեղերի վրայով, փորտեղ մեզանից առաջ դեռ փոշ վոք յեղած չեր: Այժմ սկսվում են ուսումնասիրված վայրերը:

Մենք վաղուց չեյինք հաղորդել Մոսկվա, թե ինչպես են գնում մեր գործերը:

Յես հեռագիր կազմեցի:

ՍՏԱԼԻՆԻՆ, ՎՈՐՈՇԻԼՈՎԻՆ, ԿԱԳԱՆՈՎԻԶԻՆ,
ԹՈՒԶՔԻ ՇՏԱԲԻՆ.

ՅԵՍ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՄ, ՎՈՐ ԴՈՒՔ ԶԱՓԱԶԱՆՅ ԱՆՀԱՆԳԸՍՏԱՆՈՒՄ ԵՔ: ԲԱՅՅ ԻՆԿԱՏԻ ՈՒՆԵՑԵՔ, ՎՈՐ ՄԵՆՔ ՈՒՆԵՑԵԼ ԵՆՔ ԹՈՒԶՔԻ ՇՏԱՑ ԴԺՎԱՐԻՆ ԺԱՄԵՐ: ԱՅԺՄ ՄԵՆՔ ԱՎԵԼԻ ՍԶԱՏ ԵՆՔ: ՅԵՂԱՆԱԿԸ ԼԱՎ Ե: ԲՈՂՈՐՍ ԱՌՈՂՋ ԵՆՔ: ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՅ ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՐ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ: ԲՈՂՈՐԻ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՍ ԵՄ ՀԱՅՏՆՈՒՄ ՅԵՎ ԽԵՐԴՈՒՄ ԵՄ ԶԱՆՀԱՆԳՍԱՆԱՔ: ԱՄԵՆԱԴԺՎԱՐԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԵՆՔ ՅԵՎ ՈՒՐԱՆ ԵՆՔ, ՎՈՐ ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆ ԱՐԴԵՆ ԿԱՏԱՐԵԼ ԵՆՔ: ՎՈՂՋՈՒՅՆ:

ԲԱՅԳՈՒԿՈՎ.

Այս բոլորը հաղորդեցի ռազիոյով ամերիկյան կայաններին: Իսկ նրանք կհաղորդեն Մոսկվային:

Յես շատ հոգնել էյի: Պետք է հանգստանալ, փորովհետև շուտով պետք է փոխարինեյի Չկալովին: Դնելով գլուխս փոքրիկ սեղանի վրա, նստած նրնջեցի: Վտաներիս մոտ, հատակին դեռ քնած էր Սաշան: Զարթեցրեց մեզ ուժեղ սուլոցը: Դա Չկալովն է խնդրում փոխարինել իրեն: Արթնացնում եմ Բելյակովին: Հանձնում եմ հերթապահությունը, իսկ ինքս բարձրանում դեկանիվի մոտ: Յես բարեկամաբար զարկում եմ Վալերիին, և մենք ուրախությունից սեղմում ենք միմյանց ձեռք: Նրա աչքերն արյունակալել են, բայց բերբերն արտահայտում են ուրախություն և քնքշություն: Նա

պառկեց իմ յետևում: Ի՞նչ դուրեկան ե նստել ղեկանի վի մոտ, յերբ զգում ես, վոր այն բոլորը, ինչ վոր մենք արել ենք, ուրախացնում ե վոչ միայն մեզ, այլ և վողջ մեծ ժողովրդին:

Յերեկոյան ղեմ տեսանք ամերիկական մեծ ու գալարուն Մեկենզի գետը: Գետի շուրջը շատ ճահիճներ և վարարած տեղեր կան:

Մոսկվայում վաղուց արդեն ամառ ե, իսկ այստեղ գարունը նոր ե սկսել: Հողը մերկ և անկենդան ե, շագանակագույն: Վոչ անտառներ կան, վոչ ել թփեր:

Շուտով յերևում են Ամերիկայի բարձր և դաժան լեռները: Նրանց գագաթները ծածկված են ձյունով և սառուլցով:

Յեղանակը նորից վատթարանում ե: Լեռները ծածկվեցին ամպերով: Սկսում ե ուժեղ որորում: Ողանափ ստանում ե ողային հարվածներ: Նրա թևերը խզալի կերպով ցնցվում են: Հարկավոր ե վեր բարձրանալ, այլապես կզարկվենք մի վորևե ժայռի: Մեծ բարձրությունից խցիկում սկսում ե ցրտել: Դժվար ե շնչել: Բոլորս հագանք թթված-նային զիմակներ:

Մենք վճռեցինք թեքվել ղեպի աջ, հեռու վտանգավոր լեռներից: Յերեկոյան ղեմ դուրս յեկանք ամպերից: Ներքևում մենք տեսանք խաղաղական ովկիանոսի աղմկող ալիքները: Թռչում ենք ափի յերկարությամբ: Թռիչքը տևում ե արդեն յերկու ցրեկ և յերկու գիշեր:

«Հիմա Մոսկվայում կեսգիշեր ե,—մտածում եմ յես,—Կրեմլի ժամացույցը նվագում ե «Խնտեր-նացիոնալ»: Իսկ այստեղ, ովկիանոսի վրա, նոր ե միայն սկսում մթնել»:

Չկալովը զարթնեց: Նա հիանալի հանգստացավ, և հիմա ինձ առաջարկում ե անել նույնը:

Յես, հոգնած, գլորվեցի քնելու տոպրակի վրա և իսկույն քնեցի:

Ամպամածությունն աստիճանաբար ներքեից բարձրանում և մթության միջից գաղտագողի մոտենում ե ողանափին: Ցամաքը և շուրը չեն յերեվում: Արեվը մտավ լեռների յետևը:


— Գյորգիյ, վեր կաց, վեր կաց—լսում եմ յես քնի մեջ և զգում Չկալովի ուժեղ ձեռքը:

Վեր եմ թռչում: Խցիկում յույս ե վառվում: Քնաթաթախ յերկար ժամանակ չեմ հասկանում, թե վորտեղ եմ գտնվում: Նայում եմ ժամացույցին: Մոսկվայի ժամանակով ընդամենն առավոտյան ժամը ութն ե: Իսկ այստեղ կատարյալ գիշեր ե: Ի՞նչ հետաքրքիր ե կառուցված աշխարհը: Ս եղ մոտ, Խորհրդային Միությունում, առավոտ ե, իսկ ամերիկացների մոտ—գիշեր:

— Յեկ, նստիր ղեկանի վի մոտ:

Յես նստում եմ ողաչուի նստատեղին ու հայհոյում եմ բոլոր այդ ամպերին: Վրա հասավ հարավային մուլթ գիշերը: Արևը յերկար ժամանակ մեզ փրկում եր, և հիմա յերկու որից հետո առաջին անգամ նա անհայտացավ մեր աչքից: Շատ ափսոս: Բայց չե՞ վոր արևն ել պետք ե հանգրստանա: Կես գիշերին ամպերի միջից յերևաց արծաթափայլ յուսինը: Բայց շուտով նա ել անհայտացավ ներքևում: Մթնեց, կարծես նկուղի մեջ լինեյինք: Իմ ընկերներն անխռով քնած են: Ինձ այդ գիշեր ամպերի մեջ և խաղաղական ովկիանոսի ջրերի վրա սարսափելի թվաց մենակ նստել ղեկանի վի մոտ:

Բայց զժվարին բոպեններին յես հիշեցի, թե ինչպես Ստալինն ամբողջ կյանքում յերբեք վոչ վոքից չի վախենում և թե ինչպես նա միշտ հաղթող ե հանդիսանում: Հիշեցի նրա սիրալիր աչքերը և միանգամից մոռացա հոգնածությունն ու յերկյուղը:



Մթության մեջ բարձր յերգեցի մի յերգ իմ հայրենիքի մասին: Բայց յերգի հնչյունները խլացնում եր քամու զվարթ սուլոցը, վորը փչում եր խցիկի լուսամուտներից դուրս:

Հուսաբացին զարթնեցին Չկալովը և Բելյակովը:

Բոլորի տրամադրությունը հիանալի ե: Միայն Սաշա Բելյակովը շատ նեղացել ե ամերիկացիներից՝ նրանք ուղիո—խոսակցությունը կատարում են իրենց լեզվով, իսկ Բելյակովը չի հասկանում նրանց լեզուն:

Ձախ կողմում, ներքևում, բավականին հեռու փայլեցին ովկիանոսի շոգենավի լույսերը: Մենք շուտ յեկանք դեպի ցամաք:

Արևը դուրս յեկավ: Հիմա պարզ յերևում են Ամերիկայի մեծ ու անծանոթ քաղաքները:

Լեռնային փայրերը կտրտում են գետերի լայն հովիտները: Ուժեղ անձրև ե տեղում:



Ա Մ Ե Ր Ի Կ Ա Ն

Մենք հաշվեցինք, թե ինչքան ժամանակ կբավականա բենզինը: Դժբախտաբար, շատ քիչ բենզին եր մնացել:

Մենք մտանք անձրևային ամպերի մեջ: Անձրևը թանձր ե և տաք: Ափսոս, վոր գետինը ծածկվեց մեր աչքից: Չե՞ վոր հետաքրքրական ե տեսնել ոտար քաղաքներ: Ժամանակն անցնում ե: Մենք թռչում ենք ամերիկյան հողի վրա ավելի հեռուն:

Բայց ահա ազդանշանի գործիքը իմաց ե տալիս մեզ, վոր պետք ե իջնել: Բենզին համարյա չկա: Բոլորս ել ուզում ենք թռչել ավելի և ավելի հեռուն: Բայց հնար չկա, պետք ե իջնել: Հակառակ մեր ցանկության, իջնում ենք ներքև, գետին:

Ամպամածությունը վերջացավ, և մենք դուրս

յեկանք լայն գետի վրա: Նրա կողքին յերևում է քաղաք: Մենք ղիտեցինք այն:

Պարզվեց, վոր դա Պորտլանդն է: Այստեղ շատ վատ, մատախլապատ յեղանակ էր:

Թուանք ցածր-ցածր՝ աւերի կտուրների վրայով, մինչև վոր գտանք այն տեղը, վորտեղ վայրեջք են կատարում ողանավերը:

Վայրեջքի դաշտը լավ ղիտելուց հետո, բարեհաջող իջանք գետնի վրա:

Ամերիկացիներն արդեն վաղուց էին սպասում «Ստալինյան մարշրուտ» մակագրությունն ունեցող ողանավին: Շատ ժողովուրդ է վազում դիմավորելու: Բոլորը ձեռքով վողջունում են: Բայց թե նրանք ինչ են բղավում, — մենք չենք հասկանում: Նրանք խոսում են իրենց լեզվով:

Կանգնեցնում եմ մոտոռը: Պրոպելլերի ուրախ և ուժեղ ձայնը լուռ է: Տիրում է խորին լուռ-թյուն: Յես բացում եմ դռնակը և ողանավից ցատկում եմ դուրս:

Մեր վոտների տակ ամերիկական հողն է: Այժմ պարզ է, վոր մեր առաջնորդ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի առաջադրանքը մենք պատվով կատարել ենք: Հին և նոր աշխարհները միացնող ճանապարհը՝ դաժան Արկտիկայի վրայով բացել են խորհրդային ողաշունները:

Յես նայում եմ ժպտացող ընկերներին: Նրանք յերեք որվա աշխատանքից սաստիկ հոգնել են, բայց նրանց աչքերում ուրախություն է փայլում: Մենք գրկախառնվում ենք, համբուրվում և շնորհավորում ենք մեր հաղթանակը:

Պորտլանդից մենք խոսում ենք Մոսկվայի հետ ռադիոյով և հեռախոսով: Զեկուցում ենք թուիչքի վերջանալու մասին: Մեզ Մոսկվան շնորհավորում է ընկեր Ստալինի անունից:

Մենք ուզում էինք, ինչքան հնարավոր է, շուտ վերադառնալ Մոսկվա:

Բայց ակամա ստիպված էինք կանգ առնել Ամերիկայի Սան-Ֆրանցիսկո և Նյու-Յորք քաղաքներում և Փարիզում՝ Ֆրանսիայի մայրաքաղաքում: Ամենուրեք մեծ բազմություն էր դիմավորում մեզ:

Բայց շուտ, շուտ դեպի Խորհրդային Միություն: Ինչքան ուրախալի յե նորից տեսնել թանկագին հայրենիքը:

Սահմանագլխից մինչև Մոսկվա յուրաքանչյուր կայարանում գնացքին սպասում էին հազարավոր Խորհրդային քաղաքացիներ: Մեր վագոնը լցրել էին ծաղիկներով: Մեր ձայնը խռպոտ էր դարձել շարունակ խոսելուց:

Բայց ահա և Մոսկվան: Միլիոնավոր մոսկվացիներ՝ դուրս են յեկել մեզ դիմավորելու:

Մենք անցանք վողջ քաղաքով, ինչպես մեր ժողովրդի սիրելի զավակներ:

Կրեմլի ճանապարհին մեզ վրա թափում էին ծաղիկներ և վողջույնի թռուցիկներ: Ամբողջ Մոսկվան վողջունում էր մեզ:

Կրեմլում մեզ դիմավորեցին ընկեր Ստալինը և ամբողջ կառավարությունը: Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը գրկեց մեզ, ինչպես հարազատ զավակների: Դա ամենաթանկագին նվերն էր:



ՀՀ Ազգային գրադարան



NL0139280

15961

087.1

F - 26